«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը ծնողի հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Հաստատություն՝ «Աշտարակ համայնքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Վարդանյան Սաթենիկ

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ՝ ԾՆՈՂ-ՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 5

1.1 Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցությունը նախադպրոցական հաստատությունում 5

1.2 Ծնողավարման ժամանակակից գործընթացները, իրականացման ուղիները 8

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ԸՆՏԱՆԻՔ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ 10

2.1 Ընտանիքի և մանկապարտեզի դերը երեխայի դաստիարակության և զարգացման հարցում 10

2.2 Գործնական աշխատանք 17

Եզրակացություններ 20

Գրականության ցանկ 21

Ներածություն

«Երեխայի հոգին նման է մաքուր գրատախտակի. Ով ինչ կցանկանա, այն էլ կգրի»

Ջ. Հոլթ

Այո՛, յուրաքանչյուր երեխա ծնված օրից նման է մաքուր գրատախտակի, ինչպես գրեցիր, այնպես էլ կշարունակվի:

Երեխայի դաստիարակության սկիզբը դրվում է ընտանիքում, այնուհետև շարունակվում մանկապարտեզում և դպրոցում: Եթե երեխան ծնված օրից դաստիարակվի ճիշտ, ապա նրա հոգու մաքրությունը կպահպանվի: Յուրաքանչյուր անհատի ճակատագիր դասավորվում է դեռ մանկուց:

Երեխաների դաստիարակության, զարգացման և ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը, այնքան մեծ է մանկապարտեզինը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ շեշտադրվում է նախադպրոցական կրթության կարևորագույն հիմնահարցերից մեկը՝ մանկապարտեզ-ընտանիք սերտ կապը. դրա դերը նախադպրոցականի անձի ձևավորման հարցում:

Աշխատանքի նպատակն է՝

- Ուսումնասիրել և ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկություններն ու առավելությունները երեխայի զարգացման հարցում:

Աշխատանքի խնդիրները՝

- Բացահայտել համապատասխան եղանակներն ու ձևերը, որոնք կնպաստեն ծնող և դաստիարակ փոխգործունեությունը:
- Նկարագրել ծնողավարման իրականացման ուղիները և աշխատանքները:

- Բացահայտել ծնողի համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարքիքի երեխայի կրթության արդյունավետության հարցում:
- Նկարագրել ծնող- դաստիարակ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումը:

Աշխատանքը շարադրելիս կիրառվել են վերլուծական, համադրական և գործնական **մեթոդները**:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից (յուրաքանչյուր գլուխ կազմված է երկուական ենթագլխից), եզրակացություններից և գրականության ցանկից: Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերաբերում է գործնական աշխատանքին:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ՝ ԾՆՈՂ-ՍԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցությունը նախադպրոցական հաստատությունում

2023-2024 ուստարում «Աշտարակ համայնքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացնում է փորձաշրջան: Փորձարկման են դրվել «Նախադպրոցական կրթական համալիր» ծրագիրը: Նոր կրթական ծրագրերը բխում են պետական կրթական չափորոշիչները, որտեղ հաշվի են առնված նախադպրոցական տարիքի երեխաներից ակնկալվող կարողությունները և սաների զարգացման կրթական վերջնարդյունքները:

Այս ծրագրերում առանձնակի ուշադրություն է դարձված նաև ծնողական կրթությանը: Ծնողավարման ժամանակակից մեթոդներին, տեխնոլոգիաներին տիրապետելով մանկավարժական գործընթացը դառնում է առավել դյուրին և հետաքրքիր: Ստեղծվում են սերտ համագործակցելու լայն հնարավորություններ:

Ծնողի հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողը մշտապես կարիք ունի իմանալու մանկապարտեզի տեսակետն իր երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողի՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումից: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է ընտանիքի, նախադպրոցական կրթական հաստատության հաջորդական և փոխպայմանավորված մանկավարժական ներգործությունը:

Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյադաստիարակման հիմնական օղակը: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակման հիմքերը: Երեխան, ծնվելով ընկնում է իր համար բոլորովին նոր միջավայր, որտեղ նրա առաջին ու հիմնական սյունը ընտանիքն է: Նա առաջինը տեսնում է իր ծնողներին: Ծնողի վաղ

ներգործությունը, որը նույնիսկ կարող է չգիտակցվել երեխայի կողմից, ազդում է նրա հետագա զարգացման վրա։

Երեխայի հետագա դաստիարակչական գործոնները շարունակվում են նախադպրոցական հաստատություններում՝մսուր մանկապարտեզում, նախակրթարանում։ Հենց այստեղից է սկիզբ առնում ծնողի և մանկավարժական աշխատողի կապը։ Մանկապարտեզում դաստիարակի աշխատանքի արդյունավետությունը կախված է ծնողի հետ փոխհարաբերությունից։

Երեխայի մոտ դաստիարակության հիմքը դնում է ծնողը և նրա սեփական կյանքը կառուցելու օրինակ ծառայում։

Մանկապարտեզում սաների հետ աշխատելիս մանկավարժը բախվում է մի շարք խնդիրների, որոնք պայմանավորված են սանի վարքագծի և սխալ դաստիարակության հետ։ Շտկողական աշխատանքները բարդ են, քանի որ հիմքը դեռ վաղ հասակից սխալ է դրվել։ Այս պարագայում էլ մեծ արդյունավետություն կունենա ծնող և դաստիարակ համագործակցությունը։ Ծնող-դասիարակ համագործակցությունը նպաստում է, որ յուրաքանչյուր սանի համար վերածվի ստեղծագործական միջավայրի, ստեղծվի միասնական հանրույթ՝ ծնող-երեխա-դաստիարակ։

Մանկապարտեզների մեծ մասը կիրառում են ընտանիքի հետ համագործակցության ավանդական ձևերը՝ ծնողական սեմինար, հեռախոսազրույց, հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ և այլն։ Դրանց թվին են ավելացել նաև էլեկտրոնային և համացանցային հաղորդակցության ձևերը։

Յուրաքանչյուր ծնող դաստիարակում է իր երեխային այնպես, ինչպես որ ինքն է ճիշտ գտնում և շատ ժամանակ փորձում է զերծ մնալ խորհուրդներից և այլ միջամտություններից։ Բայց այս ամենը կարող է ունենալ իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը։

Մեր խնդիրն է ստեղծել ծնողական ամուր համայնք, որը պատրաստ կլինի մասնակցելու մանկապարտեզի գործունեությանը։ Առօրյա գործունեությունից սկսած

մինչև միջոցառումների կազմակերպում, ծնողը պետք է ներգրավված լինի դաստիարակի հետ միասին սանի ուսումնադաստիարակչական գործառույթներին։

Մանկապարտեզի կյանքում ծնողի ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի երեխայի հաջողության համար։ Ինչպիսին էլ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի զարգացման հարցում մեծ ազդեցություն ունի։

Մի շարք ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ այն երեխաները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցել են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասել մանկապարտեզում։ Նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է, և նրանք աչքի են ընկնում դրական վարքով։ Այսինքն՝ ծնող-դաստիարակ կապի արդյունքում երեխան միայն շահում է։ Այդ համգործակցության ընթացքում ծնողն ուշադիր է լինում ինքն իր հանդեպ և փորձում է բարձրացնել գիտելիքների և հմտությունների աստիճանը; Այս ամենի արդյունքում ծնող-երեխա-դաստիարակ կապը ավելի է ամրանում և արդյունավետ դառնում։ Ծնողի հետ համագործակցությունը դաստիարակին նույնպես դարձնում է ինքնավստահ։ Նախադպրոցական կրթության կարևորագույն հարցերից՝ ինչպիսիք են կրթությունն ու դաստիարակությունը, հնարավորություն են ընձեռում մանկավարժական աշխատողին համագործակցել ծնողի հետ։ Այժմ նշենք, թե որ դեպքում է անհրաժեշտ դաստիարակ-ծնող համագործակցությունը.

- քննարկել վարքի հետ կապված հարցերը։
- Միջոցառումների կազմակերպման գործում դաստիարակը իրականացնում է աշխատանք ծնողի հետ։
- Իրականացնել էքսկուրսիաներ, թեմատիկ ցուցահանդեսներ և այլն։

Շատ կարևոր է նշել, որ դաստիարակ և ծնող փոխգործուն աշխատանքի արդյունքում ծնողն ավելի մոտիկից է ծանոթանում մանկավարժի բարդ և պաասխանատու աշխատանքին և ճիշտ գնահատում այդ ամենը։

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ծնող և դաստիարակ կապի ու համագորակցության արդյունքը դրական նշանակություն ունի։

1.2 Ծնողավարման ժամանակակից գործընթացները, իրականացման ուղիները

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է (սանը)։ Անկասկած, և՛ ընտանիքում, և՛ մանկապարտեզում երեխան է իր կրթության և զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը։ Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ։ Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավվել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության։

Գոյություն ունեն մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր և արդյունավետ համագործակցության մի շարք ուղիներ։ Անդրադառնանք նաև դրանց։

- Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել սաները։
- Ծնողական ժողովների ընթացքում քննարկվում են կրթության կամ սաների զարգացման փուլերին առնչվող մի շարք հարցեր։ Ծնողական ժողովները կարող են լինել բազմաբովանդակ. ժողովներ, որոնք կվերաբերեն սաների կրթադաստիարակչական հարցերին, բազմաբնույթ միջոցառումների կազմակերպմանը, շաբաթական պարապմունքներին մասնակից լինելուն և մի շարք այլ հարցերով։

Յուրաքանչյուր պետական կրթական հաստատություն շարժվում է կրթական չափորոշիչներով, այստեղից էլ հետևություն, որ յուրաքանչյուր տարիքային խումբ պետք է ունենա ծնողական լրատու։ Սա նույնպես համարվում է ծնողավարության իրականացման ուղիներից մեկը։

Առավոտյան հանդիպումների ժամանակ ծնողները նախապես կարող են ծնողական լրահոսի անկյունում փակցնել այն ծրագրերը, որոնք կապված են երեխաների հետ (իրենց հույզերն ու մտահոգությունները՝ որպես իրենց երեխաների անհանգստության պատճառ, կամ առաջարկություններ էքսկուրսիա կամ միջոցառումների կազմակերպման հարցում)։ Ծնողական լրատու անկյունում նաև իրենց բաժինն ունեն դաստիարակները, որտեղ փակցնում են յուրաքանչյուր օրվա պարապմունք։

Օրվա երկրորդ կեսին դաստիարակը ծնողների հետ հանդիպելիս ներկայացնում է այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել սաների հետ և կարող են կատարել նաև տանը:

Ծնողական ժողովներից բացի, դաստիարակը ծնողի հետ կարող է շփվել նաև համացանցի միջոցով՝ մեդիա հարթակում: Ծնողի հետ շփումը կարող է լինել նաև անհատական, այսինքն՝ տվյալ սանի մասին՝ հեռախոսազանգով, որպեսզի այն չբարձրաձայնվի ժողովների ժամանակ կամ երեկոյան՝ սաներին տուն ճանապարհելիս, որոշ ծնողների ներկայությամբ:

Պետական մանկապարտեզում ցանկացած պահի ծնողը կարող է մտնել մանկապարտեզ, բայց խմբասենյակ կամ ննջասենյակ մտնել չի կարող, ծնողի մուտքը գործում է միայն հանդերձարանում՝ սաների հագուստը հանելիս և հագցնելիս:

Ծնողները մանկապարտեզի գործունեության մասնակիցն են դառնում միայն օրինակելի պարապմունքների, հանդեսների ժամանական՝ որպես հանդիսատես: Վերջին ժամանակներում եղան մի շարք փոփոխություններ, որի արդյունքում ծնողի գործունեությունը պարտեզում ավելի մեծացավ: Մանկապարտեզում, ըստ տարեկան պլանի և հաստատված ժամանակացույցի, կազմակերպվում են բաց դռների օրեր, որի ընթացքում ծնողները կարող են այցելել և մասնակցել պարապմունքներին, հետևել խոհանոցի աշխատանքներին, միջոցառումների անմիջական մասնակից դառնալ:

Ծնողավարման ժամանակակից գործընթացի ուղիներից մեկն է Facebook-յան հարթակը, որը շատ արագ հաղորդակցում է ապահովում: Որոշ դեպքերում էջը վարում է կոնկրետ պատասխանատուն կամ դաստիարակը: Էջում սովորաբար տեղադրվում են տարվա ընթացքում իրականացված միջոցառումների տեսանյութեր, օրինակելի պարապմունքներ, երբեմն էլ օրվա գործունեության մասին լուսանկարներ, հակիրճ գրություններ:

Ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել և օգնել ծնողներին, որպեսզի իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգան, քանի որ մանկապարտեզը մանկավարժի «տարածքն» է: Մանկավարժը պետք է կարողանա հաղորդակցվել ծնողի հետ նրա մակարդակին համապատասխան՝ խուսափելով նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից: Պետք է շեշտը դնի երեխայի բնավորության դրական

հատկանիշների վրա, կարողանա ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կկարողանան տանը օգնել իրենց երեխաներին։

Ժողովից անմիջապես հետո անհրաժեշտ է գրի առնել բոլոր մանրամասները՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը, եթե մանկավարժից (տվյալ դեպքում դաստիարակից) պատասխան է ակնկալվում, ապա հարկավոր է պատասխանել առանց հապաղելու. անպայման պետք է ապահովել հետադարձ կապը։

Նախադպրոցական հաստատություններում պետք է նաև գործեն «Վստահության հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ» համագործակցային ժամանակակից ուղիները, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում նախադպրոցականի ծնողի հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում։ Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողն ու դաստիարակը սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխայի բնականոն զարգացման։

ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ-ԸՆՏԱՆԻՔ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

2.1 Ընտանիքի և մանկապարտեզի դերը երեխայի դաստիարակության և զարգացման հարցում

Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է, ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը։ Գոյություն ունեն ընտանիք հասկացության բազմատեսակ ձևակերպումներ, օրինակ՝

- ընտանիքը ամուսնական կապով ամրագրված միություն է, որի նպատակը կենսաբանական վերարտադրումն է,
- ընտանիքը սոցիալական ինստիտուտ է, որը բնորոշվում է հոգեհարազատ մթնոլորտով և ընտանիքի անդամների փոխհարաբերություններով,
- ընտանիքը սոցիալ-մանկավարժական միավոր է՝ ուղղված ընտանիքի յուրաքանչյուր անդամի գոյատևման և ինքնահաստատման պահանջմունքների լիակատար բավարարմանը,
- ընտանիքը ամբողջական կառույց է, ուր ձևավորվում, զարգանում և դրսևորվում են անձնային բոլոր հատկությունները,

- ընտանիքը ոչ թե այն բնակավայրն է, ուր ապրում են, այլ այն հուզականությամբ լի մթնոլորտն է , ուր միշտ սպասում են, հասկանում և սիրում են։

Ընտանիքի մասին լավագույնս արտահայտվել է ականավոր հայ գրող Ռաֆֆին՝ մասնավորապես նշելով. «Ընտանիքը երեխայի մթնոլորտն է, նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը, նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները, բոլորն այն չափով, ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով, ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին»։

Իսկ, ինչպես ասել է ուկրաինացի նշանավոր մանկավարժ և գրող Ս. Մակարենկոն «Ընտանիքում է դրվում երեխայի զգացմունքների, մտքերի, բնավորության, գիտակցության սկզբնական հիմքը և ձևավորումը։ Ուստի և չափազանց կարևոր է իմանալ, թե ինչպես ընտանիքը, ծնողները գլուխ են բերում երեխաների դաստիարակության կարևորագույն խնդիրը, և օգնում նրանց այդ դժվարին ու խիստ պատասխանատու գործում»[1]։

Ընտանիքի դերը և նշանակությունը մեծ է երեխայի դաստիարակության հարցում։ Ինչպես փոքր հասակից երեխան դաստիարակվեց, այդպես էլ կշարունակվի և վերջապես իզուր չէ ասված հայտնի դարձած այս խոսքերը. «Երեխան ընտանիքի հայելին է»։ Այս արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում։

Ընտանիքի կարևորագույն գործառույթները հիմնավորում են մարդկության գոյատևման ընտանեկան ձևի առավել պաշտպանվածությունը, հետևաբար նաև նպատակահարմարությունը։ Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության դերը հատկապես ազդեցիկ է և կարևոր երեխայի ներդաշնակ գոյատևման ու զարգացման գործում։ Հոգեբան Լեոնտևը նշում է, որ «Նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ, ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը

[1] Մակարենկո Ս., Դասախոսություններ երեխաների դասիարակության մասին, 1941։

և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայությանը»[2]։ Ընտանիքը ապահովում է երեխայի հետագա երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ և ձևավորում որոշակի կենսակերպ։

Ընտանեկան դաստիարակությամբ է մեծամասամբ պայմանավորված երեխայի հետագա գոյության և կենսագործունեության ներդաշնակությունը։ Երեխայի քաղաքակիրթ վարքը նույնպես ընտանիքի ճիշտ դաստիարակության արդյունքն է։ Այն երեխաները, որոնք ավելի քաղաքակիրթ են, տիրապետում են քաղաքավարության բոլոր կանոններին, ավելի խելացի են ուսումնատենչ, սա նույնպես խոսում է դաստիարակված և կիրթ ընտանիքի մասին։ Այդպիսի երեխաների հետ աշխատելը շատ ավելի հեշտ է և հաճելի։ Սակայն ոչ միշտ են հանդիպում կիրթ և քաղաքավարի ընտանիքիներ և այնտեղից ճիշտ դաստիարակություն ստացած երեխաներ։ Այս պարագայում նրանց հետ աշխատելը շատ ավելի դժվար է։ Կրկին անդրադառնալով Ս. Մակարենկոյի խոսքերին, ով ասել է. «Ամենքը չեն կարող երեխաներ դաստիարակել։ Դրա համար գիտելիքներ են հարկավոր, որ չունի ծնողների մեծամասնությունը, մանավանդ երիտասարդ ծնողները։ Այդ գիտելիքները անհրաժեշտ են ինչպես օդ, ինչպես հիմնական կարիք»[3]։

Ընտանեկան դաստիարակության միջոցով լուծվում են երեխայի անձնավորության կայացման մի շարք խնդիրներ։ Դրանք են՝

- Ստեղծվում են երեխայի լիարժեք զարգացման համար բոլոր հնարավոր պայմանները։
- Ապահովվում է երեխայի հոգեբանական պաշտպանվածությունը և ձևավորվում է վստահություն աշխարհի հանդեպ։
- Զարգանում է երեխայի ինքնագիտակցությունը, ձեռք է բերվում սեռային պատկանելության և արժանապատվության զգացողություն։
- Ձևավորվում են կյանքի հմտություններ և դրական սովորություններ։
- Յուրացվում են սոցիալ-բարոյական արժեքներ, ձևավորվում է կենցաղային մշակույթ։

[2] Սմբատյան Լ., Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ, 2010։
[3] Մակարենկո Ս., Դասախոսություններ երեխաների դաստիարակության մասին, 1941։

- Փոխանցվում են և յուրացվում ընտանեկան փոխհարաբերությունների նմուշներ, ձևավորվում է ընտանիքի պահպանման և դաստիարակության որոշակի օգտակար փորձ։

Նշված խնդիրների կարևորությունը պահանջում է ընտանեկան դաստիարակության մանկավարժական մոտեցումների հստակեցում և հատուկ մշակում, ընտանեկան դաստիարակության կազմակերպման եղանակների հուշում և տարածում ծնողական միջավայրում։ Ընտանեկան դաստիարակության գործընթացն արդյունավետ է, երբ կազմակերպվում է ոչ թե կամայական եղանակներով, այլ մտածված և հետևողական մանկավարժական աշխատանքի միջոցով։

Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ։ Ճիշտ է, յուրաքանչյուր ընտանիք ունի դաստիարակության իր սկզբունքներն ու մոտեցումները, սակայն դրանք պետք է պարբերաբար վերանայվեն, ճշտվեն և համապատասխանեցվեն ընտանեկան դաստիարակության մանկավարժորեն ընդունելի պահանջներին։ Ժամանակակից մանկավարժությունը դաստիարակության համակարգում առավել կարևորում է ընտանեկան դաստիարակությունը, ընդունում է դրա գերակայությունը՝ համարելով ընտանիքը բազմաբնույթ սոցիալական խումբ, հիմնելով ընտանիքի դաստիարակչական ներգործության լայն հնարավորությունների վրա։

Մի շարք մանկավարժներ և հոգեբաններ (Վիգոտսկին, Տ. Ա. Մարկովան և այլք) երկար տարիներ ուսումնասիրելով ընտանեկան դաստիարակության առավելությունները, առանձնացնում են ընտանեկան դաստիարակության երեք գործոնները, որոնք բնութագրում են ընտանեկան դաստիարակության հիմնական առանձնահատկությունները։ Առաջին առանձնահատկությունը վերաբերում է ընտանեկան դաստիարակության մթնոլորտին։ Այն չափազանց հուզական է, ընկերական և մտերմիկ։ Ընտանեկան դաստիարակությունը ուղեկցվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների սիրով և նվիրվածությամբ, փոխադարձ քնքշությամբ և հավատարմությամբ։ Ընտանեկան երկրորդ առանձնահատկությունը մանկավարժական ներգործության մշտական բնույթն է։ Ընտանիքում ստեղծվում են

լավագույն պայմաններ երեխային հանգիստ, առանց շտապելու դաստիարակելու համար։ Այն, ինչ հնարավոր չէր երեկ, կարելի է իրականացնել այսօր կամ վաղը։ Երկարատև ներգործելու հնարավորությունը ծնողներին օգնում է փորձարկել և ընտրել դաստիարակության տարբեր եղանակներ, շտկել թույլ տված սխալները։ Ընտանիքում երեխային միշտ դաստիարակում են մայրիկը և հայրիկը, բայց հաճախ լինում են դեպքեր, երբ երեխան է հասկանում իր սխալը և սկսում է ինքնադաստիարակությամբ զբաղվել։ Օրինակ, կարելի է կանխատեսել մայրիկի և հայրիկի զայրույթը և ձեռնարկել համապատասխան քայլեր՝ ներողություն խնդրել, կատարել ճիշտ գործողություններ, որի միջոցով կմեղմի ծնողների զայրույթը։

Ընտանեկան դաստիարակության երրորդ առավելությունը երեխային՝ ընտանեկան խնդիրների լուծմանը, լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունն է։ Երեխան, ինչպես և հայրիկը կամ մայրիկը, ընտանիքի լիարժեք անդամ է, հետևաբար ունի իրավունք մասնակցելու ընտանեկան գործունեության քննարկմանն ու լուծմանը։ Նշված հնարավորությունը երեխային ոգևորում է և նրա մեջ ցանկություն առաջացնում հավասարաչափ մասնակցելու ընտանիքի բոլոր գործերին։ Երեխան հաճույքով և ամենայն պատասխանատվությամբ է կատարում իրեն վստահված բոլոր հանձնարարությունները, որոնք աստիճանաբար կարող են վերածվել պարտականությունների։ Վաղ տարիքից սկսած երեխան ընտանիքում կարող է ունենալ մշտական պարտականություններ՝ հավաքել խաղալիքները, կատարել տատիկի կամ պապիկի խնդրանքը, իսկ երեք տարեկան հասակում նա լիովին ընդունակ է օգնելու կենցաղային տարբեր գործերում՝ խնամել ծաղիկները, ջրել հողամասի ծառերը, կերակրել ընտանիք կենդանիներին և այլն։

Ընտանեկան դաստիարակության հիմքում ընկած է ծնողներին և ընտանիքի մյուս անդամներին ընդօրինակելու սկզբունքը։ Երեխան թե՛ բացասական, թե՛ դրական հատկանիշները հիմնականում ընդօրինակում է ընտանիքից։ Հետևելով ծնողների վարքագծին և հարաբերություններին, երեխան սովորում է ճանաչել մարդկանց, տարբերում և գնահատում է մարդկանց վարքագծի ընդունված ձևերը և կարողանում է կողմնորոշվել սեփական ցանկությունների և կարողությունների մեջ։

Ընտանեկան դաստիարակության սկզբունքները գրեթե չեն տարբերվում դաստիարակության ընդհանուր սկզբունքներից։ Դրանք են՝

- մարդասիրություն և գթասրտություն,
- երեխայի հանդեպ սեր և հարգանք,
- ընտանեկան փոխհարաբերություններ կառուցելիս լավատեսություն,
- երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատում,
- երեխային ներկայացվող պահանջների միասնականություն,
- ծնողների հեղինակության անսասանություն, նրանց կարծիքի գերակայություն, հետևողականություն և պահանջկոտություն։

Ընտանեկան դաստիարակության կարևորագույն պայմանը սերն է երեխայի հանդեպ, բայց շատ հաճախ ծնողական սիրո դրսևորումներն անցնում են բոլոր սահմանները և վերածվում են գերհովանավորչության. սա ընտանեկան դաստիարակության մեջ հանդիպող ամենատարածված սխալն է։ Մի շարք ընտանիքների բնորոշ է բարձիթողի ընտանեկան դաստիարակությունը։ Սովորաբար այս ձևը բնորոշ է աշխատանքային խիստ զբաղվածություն ունեցող ծնողներին։ Բարձիթող դաստիարակությամբ երեխան մեծանում է անկանոն և չվերահսկվող պայմաններում ու, լավագույն դեպքում, ձևավորվում է անկազմակերպ, անկարգապահ, հաճախ առօրյա հաճույքներով ապրող անձնավորություն։

Ընտանեկան անընդունելի դաստիարակության հաջորդ տեսակը մոխրոտի սկզբունքով դաստիարակությունն է։ Այս տեսակին բնորոշ է երեխայի հանդեպ անտարբեր և անսովոր վերաբերմունքը։ Այդպիսի ընտանիքում տիրում է բացասական հուզական մթնոլորտ։ Անտարբերության, հոգատարության բացակայության պայմաններում մեծացող երեխային բնորոշ է նյարդային անկայունություն, բնավորության բացասական դրսևորումներ, հասակակիցների հետ հաղորդակցման դժվարություններ։ Այսպիսով, ծնողներն են երեխային դաստիարակող առաջին մանկավարժները։ Համաձայն ֆրանսիացի հանրահայտ մանկավարժ Ժ. Ժ. Ռուսոյի՝ յուրաքանչյուր հաջորդ դաստիարակող ունի ավելի թույլ մանկավարժական ներգործություն երեխայի դաստիարակությանը, քան նախորդը։

Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի համագործակցությունը նախադպրոցական կրթական հաստատությունների հետ: Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու համար: Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային և կրկնապատկվում նրա սովորելու և աշխարհը ճանաչելու ցանկությունը: Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը: Համագործակցության կազմակերպման և համակարգման բարդ գործառույթը պատկանում է մանկապարտեզի մանկավարժական անձնակազմին՝ տնօրենի գլխավորությամբ: Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները, որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող այսօրվա պահանջներից: Ավանդական ձևերից են ծնողական ժողովները, բաց դռների օրերը, հատուկ կազմակերպվող խորհրդատվությունները ծնողներին հուզող թեմաների շուրջ: Երիտասարդ ծնողների հետ կազմակերպվում են նաև սեմինար-պարապմունքներ: Բավական արդյունավետ են համատեղ միջոցառումները, որոնք կարող են տարբեր նպատակների ծառայել, օրինակ՝ տիկնիկային ներկայացմանը, հեքիաթների բեմականացման համատեղ դիտումն ու քննարկման ճանաչողական բնույթը, որը հիմնականում նպաստում է միացյալ ուժերով ներկայացման բովանդակության վերլուծությանը:

Կարելի է կազմակերպել որևէ թեմային նվիրված միջոցառում, որի անմիջական մասնակիցը կլինի ծնողը իր երեխայի հետ: Նմանօրինակ աշխատանք ներկայացված է գործնական աշխատանք բաժնում: Ծնողական անկյունը նույնպես ծնողի ներգրավվածության գործընթացներից մեկն է մանկապարտեզում: Ծնողական անկյունը բարենպաստ պայման է ստեղծում ազատ և անկաշկանդ մթնոլորտում զրուցելու, հարցեր քննարկելու համար: Համագործակցության հետաքրքիր եղանակ է ինտելեկտուալ խաղը, որին մասնակցում են ծնողները. նրանք կարող են հանդես գալ

ժյուրիի կամ մասնակիցների դերում։ Արդյունավետ ձև է ծնողների հետ համատեղ միջոցառումների կազմակերպումը։

Ծնող-սան-դաստիարակ սերտ համագործակցության սեփական փորձ ունենալով. մեր կողմից կազմակերպվեց և իրականացվեց նախագծային մի աշխատանք, որտեղ հաշվի առնելով երեխաների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, ինչպես նաև ծնողների ունակությունները, որը ծնող-մանկապարտեզ համագործակցության լավագույն օրինակներից է։

Այսպիսով, ծնողի ներգրավվածությունը մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացինունի շատ դրական կողմեր և այդ ամենը ավելի է նպաստում երեխայի ճիշտ դաստիարակությանը և կրթական գործընթացների զարգացմանը։

2.2 Գործնական աշխատանք

Սույն թվականի նոյեմբերի իննին, միջին Բ խմբում՝ «Աշտարակ համայնքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, թեմատիկ ուսուցումը ամփոփվեց «Հայրենիքիս աշունները թո՛ղ խաղաղ լինեն» խորագրով միջոցառումը։ Այն նախաձեռնվել էր հաշվի առնվելով հետևյալ պահանջները՝

1. առաջին եռամսյակի ընթացքում իրականացված թեմատիկ ուսումնական նյութերը՝ ծրագրային բոլոր բաղադրիչներից (ԽՋ, ԻՇԱ, ԿԿԱ, Ե, Ֆ),
2. ծնող-սան-դաստիարակ համագործակցությունը,
3. ծնողների, սաների հետ համատեղ նախագծային աշխատանքի կազմակերպում և իրականացում։

Կից ներկայացնում ենք միջոցառման թեման, նպատակը, խնդիրները և ընթացքը։

Թեմա՝ «Հայրենիքիս աշունները թո՛ղ խաղաղ լինեն»

Նպատակը՝ Ամփոփել երեխաների ստացած գիտելիքները տարվա եղանակներից աշնան վերաբերյալ՝ նշելով տվյալ եղանակին բնորոշ առանձնահատկությունները, այդ ընթացքում նշվող ազգային և պետական տոները։

Խնդիրները՝

- Ներկայացնել տարվա եղանակներից աշունը իր փուլերով (վաղ աշուն, միջին աշուն, ուշ աշուն) (ԻՇԱ)։
- Ներկայացնել Հայաստանում և ծննդավայրում բնության հարստությունը, ներկայացնել աշտարակյան կոլորիտը՝ (ԿԿԱ)։
- Զևավորել արտահայտիչ արտասանելու կարողություն։ Հարստացնել և ակտիվացնել երեխաների բառապաշարը։ Խոսքում կիրառել բանաստեղծություններ, առած-ասացվածքներ՝ հայրենիքի և ծննդավայրի մասին (ԽՁ)։
- Ներկայացնել համապատասխան թեմատիկ երգ-պար (Ե)։
- Կիրառել քայլքի տեսակներ (Ֆ)։

Անհրաժեշտ նյութեր՝ աշնանային բերք ու բարիք, աշնանային կոմպոզիցիա, հայրենիքին և ծննդավայրին վերաբերող նկարներ, դրոշ, զինանշան, զինվորական հագուստներ, դրոշակներ, աղավնիներ։

Նախապատրաստական աշխատանք

1. Նախապես կազմակերպել ծնողական հանդիպում։
2. Ներկայացնել նախագծի վերնագիրը «Հայրենիքիս աշունները թո՛ղ խաղաղ լինեն»։
3. Մանկավարժական աշխատողների և ծնողների հետ համատեղ կազմել համապատասխան ենթախմբեր, որոնք պետք է ընտրեն աշխատանքային գործունեությունը և համապատասխան ծրագրային բաղադրիչ։
4. Սկսել աշխատանքները և նախապատրաստել համապատասխան դիդակտիկա և անհրաժեշտ նյութեր։

Աշխատանքն իրականացավ հետևյալ բաժիններով՝

1. «Հայրենիքիս պաշտպան». ներկայացավ հինգ ծնող և հինգ երեխա։ Երեխաները ծնողների հետ միասին (զինվորական հագուստով) զինվորական քայլքով մուտք գործեցին դահլիճ, հնչեց ՀՀ օրհներգը և արտասանեցին հայրենիքին նվիրված ոտանավորներ։

2. «Աշտարակյան կոլորիտներ». ներկայացան յոթ ծնող և յոթ երեխա։ Այս բաժնի մասնակիցները ներկայացրին աշտարակյան բերք ու բարիքը և գովերգեցին իրենց ծննդավայրը՝ Աշտարակը։
3. «Ապլիկացիա». ներկայացան վեց ծնող և վեց երեխա։ Այս բաժնի մասնակիցները ներկայացան աշնանային կոմպոզիցիայով։ Գովերգեցին աշունը՝ երգի, պարի և ոտանավորի միջոցով։
4. «Նկարչություն». ներկայացան հինգ ծնող և հինգ երեխա։ Այս բաժինը ներկայացավ հայրենիքի գեղատեսիլ վայրերի գունագեղ նկարով։ Գովերգեցին հայրենիքի աշունը։
5. «Ամփոփում». միջոցառման ամփոփումը կատարեցին դաստիարակները։ Ավարտին դաստիարակների կողմից հնչեց Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը։

Միջոցառումն իրականացավ ծնող-սան-դաստիարակ համագործակցությամբ։ Երկուստեք ուսանելի և դաստիարակչական միջոցառում էր, որն ամփոփեց ողջ եռամսյակի ընթացքում իրականացրած ուսումնադաստիարակչական աշխատանքները։ Հավելվածում կներկայացնենք «Հայրենիքիս աշունները թո՛ղ խաղաղ լինեն» խորագիրը կրող միջոցառման լուսանկարները։

Եզրակացություններ

Իրականացնելով «Մանկավարժական աշխատողի համագործակցությունը ծնողի հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում» թեմայով հետազոտական աշխատանքը, եկանք հետևյալ եզրահանգմանը, որ կրթելու և դաստիարակելու հինքը դրվում է ընտանիքում, իսկ մնացած բաղադրիչները լրացվում են մանկապարտեզում: Մանկապարտեզը լրացնում և աջակցում է ծնողին՝ սկսած աշխատանքը ճիշտ ավարտին հասցնելու հարցում, այստեղից էլ ստեղծվում է ծնող-սան-դաստիարակ փոխգործուն կապը: Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության արդյունքում զարգանում են հետևյալ գործոնները.

- ընտանիքը դառնում է մանկապարտեզի գործընկերը,
- համագործակցային աշխատանքի արդյունքում շահում են երեք կողմերն էլ,
- մանկավարժական աշխատանքը լրացում և օգնում է ծնողին երեխայի դաստիարակության հարցում,
- ծնողի և մանկավարժական աշխատողի համագործակցված աշխատանքի արդյունքում երեխայի կամ սանի սերն ու հետաքրքրությունը ավելի է մեծանում մանկապարտեզի նկատմամբ:

Այսպիսով, նախադպրոցական հաստատություններում մանկավարժական աշխատողների, ծնողների և սաների միջև փոխհարաբերությունները ստեղծում են առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ և ծնող-դաստիարակ գործունեությունը դառնում է ավելի դյուրին, ինչպես նաև բարձրանում է ծնողի հեղինակությունը: Իր հերթին էլ ծնողը վստահում է մանկավարժական աշխատողին: Համագործակցային աշխատանքը (միջոցառում, տիկնիկային ներկայացում, ծնողական սեմինար-քննարկում և այլն) նպաստում է ծնողի և երեխայի զարգացմանը՝ կրթական և ուսումնադաստիարակչական բոլոր բաղադրիչների տեսանկյունից:

Այսպիսով, ճիշտ դաստիարակության բոլոր նախապայմանները ծնվում են համագործակցային աշխատանքի արդյունքում:

Գրականության ցանկ

1. Դալաքյան Ա., Մարության Ս., Նախադպրոցական մանկավարժություն, 2010թ.:
2. Մակարենկո Ս., Դասախոսություն երեխաների դաստիարակության մասին, 1941 թ.:
3. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, 2010թ.:
4. Սարգսյան Լ., Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր երկրորդ խմբում:
5. Սմբատյան Լ., Սարգսյան Լ., Միտոյան Հ., Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում, 2013 թ.:
6. Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր միջին խումբ (4-5 տ.), 2021 թ.:
7. http://www.hogeban.info

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Հայրենիքիս պաշտպան.

2. Աշտարակյան կոլորիտներ.

3.Ապլիկացիա.

4.Նկարչություն.